


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

ADMINISTRATIVE TERRITORIAL DIVISION OF THE REPUBLIC OF ARMENIA



<p>ՄԱՍ 1: ԱՄՓՈՓՈՒՄ</p> <p>ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ</p> <p><u>Բնակչության թվաքանակը, կազմը և տեղաբաշխումը</u></p> <p>Բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է վերջին մարդահամարի արդյունքով ստացված մշտական բնակչության թվաքանակի տվյալների հիման վրա (2001թ. հոկտեմբերի 10-19-ը), որոնք արդիականացվում են եռամսյակային պարբերականությամբ, հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաձի (գրանցված ծնունդների և մահերի տարբերության)¹ և միգրացիայի մնացորդի (հաշվառման կանգնած և հաշվառումից դուրս գրվածների տարբերության)² տվյալներով: Վերջինիս արդյունքներով, մշտական բնակչության թվաքանակը սկսած 1993 թվականից (ըստ մարդահամարի արդյունքների հիման վրա վերահաշվարկված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների) նվազման միտում էր դրսևորել՝ 3463.7 հազ. մարդուց մինչև 3210.3 հազ.՝ 2003թ. տարեսկզբին: Սակայն, սկսած 01.01.2004թ.-ից մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներում աճի միտում է արձանագրվել՝ տարեկան միջին հաշվով 0.1%-ով, իսկ 2007թ.-ին՝ 0.2%-ով: 2008թ. տարեսկզբի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է</p>	<p>PART 1: SUMMARY</p> <p><i>DEMOGRAPHIC SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA</i></p> <p><u>The size, structure and distribution of population</u></p> <p>The current estimate of population is carried out based on the de jure population number obtained from last population census (October 10-19, 2001) which are updated on the quarterly basis by the registered data of natural increase of population (difference between the recorded births and deaths)¹ and net migration (difference between the numbers of those who got registration and who register their departure)² in the reporting period. Based on the latter, the number of de jure population since 1993 (according to the recalculated data of de jure population based on the Population census results) has had trends of reduction which fell down from 3463.7 to 3210.3 thousand persons at the beginning of 2003. However, since the beginning of 2004 an increase of de jure population number has been recorded which grew annually by 0.1% on average and by 0.2% in 2007. The number of de jure population of the republic comprised 3230.1 thousand people as of the beginning of 2008, recording an increase by 7.2 thousand compared to the same period of the previous year.</p>
--	--

¹ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳ-ի) տարածքային բաժիններից ստացված ծննդյան և մահվան վերաբերյալ ակտերի (երկրորդ օրինակների) հիման վրա:

² ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառման (գրանցման) և դուրս գրման տվյալների հիման վրա լրացվող «Եկողի վիճակագրական հաշվառման կտրոնների» և «Մեկնողի վիճակագրական հաշվառման կտրոնների» մշակմամբ ստացված տվյալներով:

¹ Based on the Certificates of births and deaths (second copies) provided from the territorial divisions of civilian registrar's agency of RA Ministry of Justice.

² Based on the tabulation of data from the statistical records (forms on arrivals and departures) presented by territorial passport services of the RA Police (they are compiled by the addresses at the time of population's registration and the registration of departure).

<p>3230.1 հազ. մարդ և արձանագրված աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 7.2 հազ. մարդ:</p> <p>Մշտական բնակչության թվաքանակի քաղաքային և գյուղական հարաբերակցությունը 2005-2008թթ-ի միջակայքում մնացել է անփոփոխ և կազմել է, համապատասխանաբար, 64.1 և 35.9% :</p> <p>2008թ. տարեսկզբին Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 48.4%-ը կազմել է արական և 51.6%-ը՝ իգական սեռի բնակչությունը: Բնակչության միջին տարիքը՝ 34.3 տարեկանն է (արական սեռի համար՝ 32.7, իսկ իգականի համար 35.9 տարեկանը):</p> <p>2008թ. տարեսկզբի դրությամբ հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 20.8%-ը կազմել է 0-15 տարեկան, 67.2%-ը՝ աշխատունակ տարիքի և 12.0%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը, այն դեպքում, երբ 1990թ.-ին այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 32.2%, 58.7% և 9.1%:</p> <p>2008թ. տարեսկզբի դրությամբ, յուրաքանչյուր 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել 489 երեխա (0-15 տարեկան) և կենսաթոշակային տարիքի (աշխատունակ տարիքից բարձր) բնակչություն:</p> <p>Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է՝ պայմանավորված ծնելիության մակարդակի կտրուկ անկմամբ և աշխատանքային տարիքի բնակչության գերակշիռ էմիգրացիոն ակտիվությամբ: Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև, մասամբ, միգրացիայի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի</p>	<p>The urban and rural distribution of population remained unchanged during 2005-2008 and they comprise, 64.1% and 35.9%, correspondingly.</p> <p>At the beginning of 2008, 48.4% out of total de jure population was male and 51.6% -female. The mean age of population was 34.3 years, for male it was 32.7 and for female- 35.9 years.</p> <p>As of the beginning of 2008, 20.8 % was at the age of 0-15 out of total number of population of the republic, 67.2% - at able-bodied age and 12.0%- over able-bodied age, while in 1990 they comprised, 32.2%, 58.7% and 9.1%, correspondingly.</p> <p>As of the beginning of 2008, 489 children (0-15 years old) and elderly people (over able-bodied age) fell to the share of per 1000 population at able-bodied age.</p> <p>One of the existing problems of demographic situation is the population ageing, the process of which was greatly accelerated in the republic during post-Soviet period due to the acute decline of birth rate and prevalent emigration of able-bodied population. Population ageing or demographic ageing is the result of long-lasting demographic changes, changes in reproduction of population, fertility, mortality and their correlations; it is partially the result of migration as well.</p> <p>By the demographic ageing scale of UN if the share of population aged 65 and over in the population structure comprise more than 7% that population is considered to be aged. As of the beginning of 2006-2008 the share of RA population 65 and over was 10.8%.</p>
--	--

բնակչությունը կազմում է՝ 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացած: 2006-2008թթ.-ի տարեսկզբի դրությամբ ՀՀ 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմել է՝ 10.8%:

2008թ. տարեսկզբի դրությամբ մշտական բնակչության 34.3%-ը կենտրոնացված է Երևան քաղաքում, իսկ ՀՀ Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերից յուրաքանչյուրում բնակվել է հանրապետության մշտական բնակչության 8.6-8.7-ական %-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 7.4%-ը, ՀՀ Տավուշի, Արագածոտնի և Սյունիքի մարզերից յուրաքանչյուրում՝ 4.2-4.7-ական տոկոսը, իսկ 1.7%-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզում:

Բնակչության բնական շարժ

2007թ.-ին արձանագրվել է 40668 ծնված, որից 341-ը կազմել են բազմապտուղ, նրանցից՝ 338-ը՝ երկվորյակ, 2-ը՝ եռյակ և մեկը՝ քառյակ: Ծնվածների ընդհանուր թվաքանակից՝ 40105-ը կազմել են կենդանի ծնվածները, իսկ 563-ը՝ մեռելածինները: Նախորդ տարվա համեմատ կենդանի ծնվածների բացարձակ թվաքանակն աճել է 6.6%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կենդանի ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով, կազմել է 12.4 պրոմիլ, որը նախորդող երեք տարիներին արձանագրված ցուցանիշի (2004-2006թթ. ծնելիության ընդհանուր գործակիցը 11.7 պրոմիլ) համեմատ աճել է 0.7 պրոմիլային կետով: Ընդ որում, հարկ է նշել, որ այս ցուցանիշը 1991թ.-ից մինչև 2001թ. ընկած միջակայքում նվազել է ավելի քան կիսով չափ, և միայն 2002թ. սկսած է, որ ծնվածների բացարձակ ցուցանիշում գրանցվել է որոշակի աճ:

Ծնելիության մակարդակի նվազումն իր ազդեցությունն է թողել նաև կանանց ծնելիության տարիքային գործակիցների վրա, ինչպես տարիքային առանձին խմբերում, այնպես էլ ամբողջապես վերցված ծնունակ տարիքում: Հատկանշական է այն փաստը, որ 20-24 տարեկանները և,

As of the beginning of 2008, 34.3% of de jure population was centralised in Yerevan city and 8.6% - 8.7% of de jure population of the republic resided in each marz of the republic such as Ararat, Armavir, Lori, Kotayk and Shirak, in Gegharkunik it was 7.4%, in Syunik, Aragatsotn and Tavush- 4.2 %- 4.7 % and in Vayots Dzor – 1.7%.

Natural Movement of Population

40668 births were recorded in 2007, of which 341 were multiple births, 338- twins and 2- triplets. 40105 of the total number of births were live births and 563-stillbirths. As compared to the previous year the absolute number of live births increased by 6.6%, crude birth rate, which is the number of live births per 1000 population in the reporting period, stood at 12.4‰, which has increased by 0.7 pro mil points against the same figure registered during the preceding three years (the crude birth rate was 11.7 in 2004-2006). In 2001 this indicator had been twice decreased compared to 1991 and some increase was recorded only since 2002.

The reduction of birth rate had also its influence on age-specific fertility rates of women, both on separate age groups and entirely on childbearing age. It is typical that women aged 20-24 and definitely to a lesser extent those aged 25-29 were and continue to be the most fertile age groups in Armenia, the share of births to which comprised correspondingly to 47.5% and 28.6%. In 2007

<p>որոշակիորեն ավելի պակաս չափով, 25-29 տարեկանները եղել, և էլ ավելի ընդգծված կերպով, շարունակում են հանդիսանալ Հայաստանի առավել պտղաբեր տարիքային խմբերը, որոնց բաժին է ընկել ծնվածների, համապատասխանաբար, 47.5%-ը և 28.6%-ը: 2007թ. ծնելիության գումարային գործակիցը (երեխաների այն քանակը, որը կծնի կինն իր պտղաբերության ողջ շրջանում) կազմել է 1.417 երեխա, բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ 2.15 երեխայի դիմաց: Ընդ որում, 2007թ. քաղաքային բնակչության ծնելիության գումարային գործակիցը կազմել է 1.395, իսկ գյուղականինը՝ 1.440 երեխա:</p> <p>Սոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ, 2007թ. կազմել է 24.6 տարեկան, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 23.0 տարեկանը:</p> <p>Հարկ է նշել, որ 2007թ. ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և հաջորդող կարգի ծնունդների մասնաբաժինը կազմել է ընդամենը կենդանածինների 13.2%-ը, քաղաքներում՝ 10.7% և գյուղական վայրերում՝ 17.6 %:</p> <p>2007թ. Հայաստանում արձանագրվել է 26830 մահվան դեպք, իսկ մահացության ընդհանուր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով, կազմել է 8.3 պրոմիլ, նախորդ տարվա նկատմամբ մահվան դեպքերը նվազել են 1.4 տոկոսով, իսկ մահացության ընդհանուր գործակիցը նվազել է 0.2 պրոմիլային կետով: 2007թ. մահվան դեպքերից 13916-ը, կամ 51.9 %-ը կազմել են արական, իսկ 12914-ը, կամ 48.1%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչները: Արական և իգական սեռերի մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբերվում է նաև կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշը տղամարդկանց և կանանց շրջանում: 2007թ.-ին կյանքի սպասվող միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 70.2 տարի, իսկ կանանց համար՝ 76.6 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 69.7, կանանց համար՝ 76.3 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար, 71.1 և 77.1 տարի:</p>	<p>the total fertility rate (number of children the woman would bear in her whole childbearing period) comprised 1.417 child, against 2.15 necessary for simple reproduction of population. Moreover, in 2007 the total fertility rate of urban population comprised 1.395 and that of rural population- 1.440.</p> <p>In 2007 the mean age of mother at birth was 24.6 years and at first birth it was 23.0 years.</p> <p>It should be mentioned that in 2007, according to the order of birth, the third and higher order of births comprised 13.2% of total number of live births, 10.7% - in urban areas and 17.6% - in rural settlements.</p> <p>26830 deaths were recorded in the Republic of Armenia in 2007 and the crude death rate, per 1000 population, comprised 8.3pro mil. As compared to the previous year deaths decreased by 1.4 % and the crude death rate decreased by 0.2 pro mil points.</p> <p>In 2007, 13916 or 51.9 % of deaths were male and 12914 or 48.1 % - female. The difference of death rates for males and females stipulate the difference of data on life expectancy by sex. In 2007 the average life expectancy for males was 70.2 years and for females - 76.6 years. In the structure of urban population this indicator was 69.7 years for males and 76.3 years for females and in the structure of rural population, correspondingly, 71.1 and 77.1 years.</p>
---	--

Ինչպես և նախորդող տարիներին, 2007թ. ևս մահացության կառուցվածքում գերակշռել են արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից (50.4%) և չարորակ նորագոյացություններից (19.4%) մահվան դեպքերը: Ընդ որում, 2007թ.-ին, 2006թ. համեմատ, մահացության դեպքերն ավելացել են միայն էնդոկրին համակարգի, սննդակարգի շեղումների, նյութափոխանակության խանգարումների և իմունիտետի բացակայության հիվանդություններից:

2007թ. հանրապետությունում մանկական մահացության գործակիցը (կյանքի առաջին տարում), 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 10.9 պրոմիլ:

Հանրապետությունում արձանագրված բնակչության բնական հավելաձի ցուցանիշը 2007թ. կազմել է՝ 13275 մարդ, իսկ բնական հավելաձի ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 4.1 պրոմիլ:

1990-2007թթ.-ին հանրապետության բնակչության թվաքանակի ցուցանիշն ի հաշիվ բնական հավելաձի ավելացել է 392.3 հազ. մարդով կամ 11.2%-ով, որից 225.1 հազ. մարդու աճը կամ բնական հավելաձի 57.4 %-ն արձանագրվել է քաղաքային բնակչության թվաքանակի ցուցանիշում:

Ամուսնություններ և ամուսնալուծություններ

Եթե 70-ականներին և 80-ական թվականների սկզբին հանրապետությունում տեղի էր ունենում գրանցված ամուսնությունների աճ, ապա 1985թ. սկսած (բացառությամբ 1989թ.) ամուսնությունների քանակն էականորեն նվազել է: Այսպես, 1990թ. հանրապետությունում կազմավորված ավելի քան 28 հազ. նոր ամուսնական զույգերի դիմաց՝ ամուսնալուծվել են ավելի քան 4 հազ. ամուսնական զույգ, 2007թ. այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմել են՝ 18145 և 2931 դեպք: Հարկ է նշել, որ 2006թ.-ի համեմատ, 2007 թ.-ին արձանագրվել է ամուսնության դեպքերի 7.4%-ով և ամուսնալուծության դեպքերի 4.8%-ով աճ:

Ամուսնության միջին տարիքը տղամարդկանց շրջանում 2007թ. կազմել է 29.2, իսկ կանանց մոտ՝ 24.9 տարեկանը,

As in the previous years, in the structure of mortality of 2007, predominated by the number of deaths of such causes as diseases of blood circulatory system (50.4%) and malignant neoplasm (19.4%). In 2007 an increase was registered in the number of deaths caused from diseases of endocrine system only, compared to 2006.

In 2007, infant mortality rate (in the first year of their life) was 10.9pro mil per 1000 live births.

In 2007 the absolute number of natural increase comprised 13275 people and the crude rate of natural increase made 4.1pro mil, per 1000 population.

Within the period of 1990-2007 on the account of the natural increase 392.3 thousand person or by 11.2 % made the population increase in the republic, of which 225.1 thousand person or 57.4% of natural increase was recorded in the number of urban population.

Marriages and Divorces

If there was an increase in the number of registered marriages in the republic in early 70s and 80s, then from 1985 (with the exception of 1989) the number of marriages considerably reduced. Thus in 1990 in the republic, more than 4 thousand families were divorced against more than 28 thousand newly formed couples. In 2007 these indicators comprised correspondingly 18145 and 2931 cases. It should be mentioned that in 2007 an increase of registered marriages by 7.4% and of divorces – by 4.8% was recorded compared to 2006.

In 2007 the mean age at marriage for males was 29.2 years and for female 24.9 years and the mean age at first marriage was 28.3 and 24.4 years, correspondingly.

իսկ առաջին ամուսնության միջին տարիքը, համապատասխանաբար, 28.3 և 24.4 տարեկանը:

Միգրացիոն տեղաշարժերը

2007թ. միգրացիոն տեղաշարժերի տարեկան ցուցանիշների մշակման արդյունքում՝ միջպետական միգրացիայի ուղղությունների վերաբերյալ ստացված տվյալների համաձայն, այդ բնութագրիչներով հանրապետությունում հաշվառման կանգնած 1.1 հազ. մարդուց՝ 65.1%-ը ժամանել են ԱՊՀ երկրներից, այդ թվում՝ 72.4%-ը ժամանել են Ռուսաստանի Դաշնությունից, 19.3%-ը՝ Վրաստանից, 4.3%-ը՝ Ուկրաինայից: 2007թ. հանրապետությունում հաշվառումից դուրս գրված 7.5 հազ. մարդուց՝ 71.9 %-ի մեկնման վայրը եղել են ԱՊՀ երկրները, այդ թվում՝ 90%-ինը՝ Ռուսաստանի Դաշնությունը, 5.4%-ինը՝ Ուկրաինան, 2.7%-ինը՝ Բելառուսը, իսկ 8.0%-ինը՝ ԱՄՆ:

ՀՀ ներքին միգրացիոն տեղաշարժերի արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ բնակչության տեղաշարժերն ունեցել են հետևյալ ուղղությունները՝ քաղաքային բնակավայրերում՝ քաղաքներից այլ քաղաքներ են տեղափոխվել 2983 մարդ, կամ ներքին միգրանտների 64.1%-ը, իսկ քաղաքներից գյուղեր՝ 1688 մարդ, կամ միգրանտների 35.9%-ը: Գյուղական բնակավայրերում՝ գյուղերից քաղաքներ են տեղափոխվել 3208 մարդ, կամ ներքին միգրանտների 79.6%-ը և գյուղերից այլ գյուղեր՝ 824 մարդ, կամ միգրանտների 20.4%-ը:

Migration Movements

According to the data reflecting interstate migration resulted from the processing of annual data on migration movements in 2007 out of 1.1 thousand person who got residence permit (registered) in the republic, 65.1% arrive from CIS countries, of which – 72.4 % arrived from Russia, 19.3%- from Georgia, 4.3%- from Ukraine. In 2007 out of 7.5 thousand people who register their departure: 71.9% departed for CIS countries, of which – 90.0 % departed for Russia, 5.4%- for Ukraine, 2.7% - for Belarus and 8.0% departed for the USA.

Population movements have the following picture according to the data resulted from the RA internal migration movement: in the urban settlements 2983 people or 64.1% of internal migrants moved from some towns to others, 1688 people or 35.9% of internal migrants - from towns to villages; in rural settlements - 3208 people or 79.6 % of internal migrants moved from villages to towns and 824 people or 20.4 % of internal migrants - from some villages to others.

Աղյուսակ 1.1 ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ¹⁾
 Table 1.1 THE ADMINISTRATIVE-TERRITORIAL DIVISION ¹⁾

Մարզեր	Տարած- քը, քառ. կմ	Բնակչու- թյան խտու- թյունը 1քառ.կմ վրա ²⁾	Համայնքներ				Գյուղական բնակավայրեր	Marzes
			ընդա- մենը	քաղա- քային	թաղա- յին	գյուղա- կան		
Area sq. km.	Population density per sq.km. ²⁾	total	urban	quarter	rural	Rural Settle- ments		
Հայաստանի Հանրապետություն	29743	109	926	48	12	866	949	The Republic of Armenia
ք. Երևան	227	4880	12	-	12	-	-	Yerevan city
Արագածոտն	2753	51	114	3	-	111	117	Aragatsotn
Արարատ	2096	132	97	4	-	93	94	Ararat
Արմավիր	1242	227	97	3	-	94	95	Armavir
Գեղարքունիք	5348 ³⁾	45	92	5	-	87	93	Gegharkunik
Լոռի	3789	74	113	8	-	105	122	Lori
Կոտայք	2089	133	67	7	-	60	62	Kotayk
Շիրակ	2681	105	119	3	-	116	127	Shirak
Սյունիք	4506	34	109	7	-	102	127	Syunik
Վայոց ձոր	2308	24	44	3	-	41	52	Vayots Dzor
Տավուշ	2704	50	62	5	-	57	60	Tavush

1) ՀՀ վարչատարածքային բաժանման հիմքը 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքն է, ներառյալ դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 14.12.2004թ. ՀՕ-41-Ն և 13.06.2006թ. ՀՕ-147-Ն ընդունված ՀՀ օրենքները:
 RA administrative-territorial division is based on RA Law "On RA Administrative-territorial Division" adopted on December 4, 1995 including Ra law on changes and additions to the mentioned law ՀՕ-41-Ն from 14.12.2004 and ՀՕ-147-Ն 13.06.2006.

2) 2008թ. հունվարի 1-ի դրությամբ:
 As of January 1, 2008.

3) Ներառյալ Սևանա լիճը:
 Including Lake Sevan.

Աղյուսակ 1.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
2007 ԹՎԱԿԱՆԻՆ

Table 1.2 MAIN DEMOGRAPHIC INDICATORS FOR 2007

Ցուցանիշներ	Ընդա- մենը	Քաղա- քային	Գյուղա- կան	Indicators
	Total	Urban	Rural	
Բնակչության խտությունը 1քառ.կմ-ի վրա	109			Population density per sq. km
Բնական հավելաճի գործակիցը - ‰	4.1	4.0	4.3	Natural growth rate- ‰
Սեռերի հարաբերակցության գործակիցը (տղամարդկանց քանակը 100 կնոջ նկատմամբ)	94	91	99	Sex ratio (males per 100 females)
Բնակչության քաղաք/գյուղ հարաբերակցությունը - %	100	64.1	35.9	Urban and rural population ratio - %
Ժողովրդագրական խնամառության գործակիցը - %	53	50	58	Demographic Dependency ratio-%
Ծնելիության ընդհանուր գործակիցը - ‰	12.4	12.3	12.6	Crude birth rate-‰
Պտղաբերության գործակիցը	1.42	1.39	1.44	Total fertility rate
Վերարտադրության նետոտո գործակիցը	0.633	0.627	0.635	Net reproduction rate
Մահացության ընդհանուր գործակիցը - ‰	8.3	8.3	8.3	Crude death rate-‰
<i>արական</i>	8.9	9.1	8.6	<i>Male</i>
<i>իգական</i>	7.7	7.6	8.0	<i>Female</i>
Մանկական մահացության գործակիցը - ‰	10.9	12.4	8.2	Infant mortality rate- ‰
Շուրջճնական (պերինատալ) մահացության գործակիցը- ‰	20.8	21.5	19.5	Perinatal mortality rate- ‰
Նորածնային մահացության գործակիցը - ‰	8.3	10.1	5.2	Neonatal mortality rate- ‰
Վաղ նորածնային մահացության գործակիցը - ‰	7.0	8.4	4.6	Early neonatal mortality rate-‰
Հետնորածնային մահացության գործակիցը - ‰	2.5	2.2	2.9	Post neonatal mortality rate-‰
Երեխաների մահացության գործակիցը - ‰	12.3	14.2	9.0	Child mortality rate-‰
Մայրական մահացության գործակիցը, 100000 կենդանի ծնվածի հաշվով	15.0	19.6	6.9	Maternal mortality rate, per 100 000 live births
Կյանքի սպասվող տևողությունը ծննդից (տարիներ)	73.5	73.1	74.1	Life expectancy at birth (year)
<i>արական</i>	70.2	69.7	71.1	<i>Male</i>
<i>իգական</i>	76.6	76.3	77.1	<i>Female</i>
Անուսնության ընդհանուր գործակիցը - ‰	5.6	5.8	5.2	Crude marriage rate -‰
Անուսնալուծության ընդհանուր գործակիցը -‰	0.9	1.1	0.5	Crude divorce rate -‰
Միջին տարիք (տարիներ)				Mean age (years)
Բնակչության	34.3	35.0	33.2	of Population
Մոր՝ <i>երեխայի ծննդյան ժամանակ</i>	24.6	25.1	23.7	of Mother at <i>child's birth</i>
<i>առաջին երեխայի ծննդյան ժամանակ</i>	23.0	23.6	21.8	<i>first child's birth</i>
Անուսնության				At marriage
<i>արական</i>	29.2	29.7	28.0	<i>male</i>
<i>իգական</i>	24.9	25.7	23.4	<i>female</i>
Բնակչության միգրացիայի մնացորդի գործակիցը - (+,-), ‰	-2.0	-2.2	-1.6	Net migration rate of population- (+,-), ‰

Աղյուսակ 1.3 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
 Table 1.3 THE NUMBER OF DE JURE POPULATION

<i>(հազ.մարդ)</i>		<i>(thsd.persons)</i>			
<i>Տարի</i>	Ընդամենը, տարեկազմի դրությամբ	այդ թվում՝		Տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
<i>Year</i>	Total, as of the beginning of the year	of which		In percents to total	
		urban	rural	urban	rural
1897*	798.0	97.0	701.0	12.2	87.8
1913	1000.1	104.0	896.1	10.4	89.6
1920	720.0	121.7	598.3	16.9	83.1
1926*	881.3	167.1	714.2	19.0	81.0
1930	999.3	245.8	753.5	24.6	75.4
1939*	1282.3	366.4	915.9	28.4	71.6
1940	1320.0	375.0	945.0	28.4	71.6
1945	1186.9	411.4	775.5	34.7	65.3
1950	1347.2	566.3	780.9	42.0	58.0
1955	1535.1	729.9	805.2	47.6	52.4
1959*	1765.3	873.1	892.2	49.5	50.5
1970*	2492.6	1472.7	1019.9	59.1	40.9
1979*	3037.3	1985.7	1051.6	65.4	34.6
1980	3080.5	2022.4	1058.1	65.7	34.3
1985	3323.2	2235.0	1088.2	67.6	32.4
1986	3368.3	2274.3	1094.0	67.9	32.1
1987	3418.5	2317.2	1101.3	67.8	32.2
1988	3463.6	2356.1	1107.5	68.0	32.0
1989*	3304.7	2222.2	1082.5	67.2	32.8
1989	3455.2	2361.7	1093.5	68.4	31.6
1990	3514.9	2416.8	1098.1	68.8	31.2
1991	3574.5	2473.6	1100.9	69.2	30.8
1992	3633.3	2503.3	1130.0	68.9	31.1
1993	3463.7	2358.8	1104.9	68.1	31.9
1994	3356.7	2274.9	1081.8	67.8	32.2
1995	3260.3	2166.4	1093.9	66.4	33.6
1996	3248.8	2149.1	1099.7	66.2	33.8
1997	3246.0	2138.4	1107.6	65.9	34.1
1998	3238.2	2122.9	1115.3	65.6	34.4
1999	3232.1	2111.6	1120.5	65.3	34.7
2000	3226.9	2095.8	1131.1	64.9	35.1
2001	3215.3	2076.3	1139.0	64.6	35.4
2001*	3213.0	2066.1	1146.9	64.3	35.7
2002	3212.9	2065.6	1147.3	64.3	35.7
2003	3210.3	2062.2	1148.1	64.2	35.8
2004	3212.2	2061.7	1150.5	64.2	35.8
2005	3215.8	2062.3	1153.5	64.1	35.9
2006	3219.2	2062.6	1156.6	64.1	35.9
2007	3222.9	2065.9	1157.0	64.1	35.9
2008	3230.1	2070.5	1159.6	64.1	35.9

*) Ըստ մարդահամարի:
 According to the Population Census

Աղյուսակ 1.4

ԱՌԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ

Table 1.4

DE FACTO POPULATION NUMBER BY RA MARZES

<i>(մարդ)</i>		<i>(person)</i>		
<i>Մարզ</i>	Առկա բնակչության թվաքանակը/ De facto population			<i>Marz</i>
	ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքով	SSԿԱՀ*-ի արդյունքներով համահարթեցված գնահատականները		
		2004	2007	
	By the result of RA population Census	Raked estimates of ILCS* results		
ք. Երևան	1091235	1044365	1057580	Yerevan city
Արագածոտն	126278	133035	131138	Aragatsotn
Արարատ	252665	250423	250573	Ararat
Արմավիր	255861	263567	272203	Armavir
Գեղարքունիք	215371	218295	226987	Gegharkunik
Լոռի	253351	255493	246819	Lori
Կոտայք	241337	243461	260821	Kotayk
Շիրակ	257242	259566	247479	Shirak
Սյունիք	134061	142828	143841	Syunik
Վայոց ձոր	53230	50057	48890	Vayots Dzor
Տավուշ	121963	123842	122261	Tavush
ՏԱՐԱԾՔԸ				AREA
Քաղաքային	1945514	1915975	1936963	Urban
Գյուղական	1057080	1068957	1071629	Rural
ԸՆդամենը ՀՀ	3002594	2984932	3008592	Total of RA

*) Տնային տնտեսությունների կենսամակարդակի ինտեգրացված հետազոտություն
Integrated Living Condition Survey

Աղյուսակ 1.5 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
 Table 1.5 THE MAIN INDICATORS OF NATURAL MOVEMENT OF POPULATION

Տարի <i>Year</i>	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով <i>Infant mortality rate, per 1000 live births</i>
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելված	ծնելիության	մահացության	բնական հավելվածի	
<i>Year</i>	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	
Ամբողջ բնակչություն Total Population								
1950	43414	11525	2970	31889	32.1	8.5	23.6	69.6
1960	74825	12675	3715	62150	40.1	6.8	33.3	50.4
1970	55694	12844	1415	42850	22.1	5.1	17.0	25.4
1980	70324	17124	1840	53200	22.7	5.5	17.2	26.2
1981	73682	16659	1727	57023	23.4	5.3	18.1	23.8
1982	74225	17449	1787	56776	23.2	5.5	17.7	24.1
1983	76436	18369	1886	58067	23.6	5.7	17.9	24.9
1984	79767	19043	1883	60724	24.2	5.8	18.4	23.9
1985	80306	19581	1987	60725	24.1	5.9	18.2	24.8
1986	81192	19410	1914	61782	24.0	5.7	18.3	23.6
1987	78492	19727	1790	58765	22.9	5.7	17.2	22.6
1988	74707	35567	1911	39140	21.6	10.3	11.3	25.3
1989	75250	20853	1534	54397	21.6	6.0	15.6	20.4
1990	79882	21993	1465	57889	22.5	6.2	16.3	18.5
1991	77825	23425	1404	54400	21.6	6.5	15.1	17.9
1992	70581	25824	1336	44757	19.9	7.3	12.6	18.5
1993	59041	27500	1048	31541	17.3	8.1	9.2	17.1
1994	51143	24652	772	26491	15.5	7.5	8.0	14.7
1995	48960	24842	697	24118	15.0	7.6	7.4	14.2
1996	48134	24936	747	23198	14.8	7.7	7.1	15.5
1997	43929	23985	678	19944	13.5	7.4	6.1	15.4
1998	39366	23210	580	16156	12.2	7.2	5.0	14.7
1999	36502	24087	572	12415	11.3	7.5	3.8	15.4
2000	34276	24025	540	10251	10.6	7.5	3.1	15.6
2001	32065	24003	497	8062	10.0	7.5	2.5	15.4
2002	32229	25554	450	6675	10.1	8.0	2.1	14.0
2003	35793	26014	422	9779	11.2	8.1	3.1	12.0
2004	37520	25679	430	11841	11.7	8.0	3.7	11.6
2005	37499	26379	460	11120	11.7	8.2	3.5	12.3
2006	37639	27202	523	10437	11.7	8.5	3.2	13.9
2007	40105	26830	433	13275	12.4	8.3	4.1	10.9

Աղյուսակ 1.5 (շարունակություն)

Table 1.5 (continued)

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելված	ծնելիության	մահացության	բնական հավելվածի	
Year	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

Քաղաքային բնակչություն

Urban Population

1950	17165	5046	1491	12119	29.4	8.6	20.8	91.2
1960	32316	6084	1356	26232	33.8	6.4	27.4	43.1
1970	31714	7399	812	24315	21.1	4.9	16.2	25.6
1980	43997	10515	1119	33482	21.5	5.1	16.4	25.5
1981	46034	10391	1060	35643	22.0	5.0	17.0	23.4
1982	45804	10980	1121	34824	21.5	5.1	16.4	24.4
1983	46747	11501	1139	35246	21.5	5.3	16.2	24.5
1984	49071	11814	1160	37257	22.1	5.3	16.8	23.9
1985	49278	12075	1161	37203	21.8	5.3	16.5	23.6
1986	50124	11936	1080	38188	21.8	5.2	16.6	21.6
1987	47711	12425	1063	35286	20.4	5.3	15.1	22.1
1988	47639	26741	1299	20898	20.2	11.3	8.9	27.1
1989	47871	13718	947	34153	20.0	5.7	14.3	19.7
1990	50144	14701	943	35443	20.5	6.0	14.5	19.0
1991	48439	15777	912	32662	19.5	6.3	13.2	18.7
1992	43972	17431	858	26541	18.1	7.2	10.9	19.2
1993	35316	18555	655	16761	15.2	8.0	7.2	18.0
1994	29958	16725	468	13233	13.5	7.5	6.0	15.3
1995	29131	16763	440	12368	13.5	7.8	5.7	15.1
1996	29388	16481	533	12907	13.7	7.7	6.0	18.1
1997	26904	15783	487	11121	12.6	7.4	5.2	18.1
1998	24535	15474	428	9061	11.6	7.3	4.3	17.4
1999	22458	15834	373	6624	10.7	7.5	3.2	16.4
2000	21390	15682	357	5708	10.3	7.5	2.8	16.6
2001	20328	15654	333	4674	9.8	7.6	2.2	16.3
2002	20804	16737	300	4067	10.1	8.1	2.0	14.5
2003	22629	16870	311	5759	11.0	8.2	2.8	13.9
2004	23628	16531	311	7097	11.5	8.0	3.5	13.2
2005	23762	17128	351	6634	11.5	8.3	3.2	14.8
2006	23793	17689	389	6104	11.5	8.6	2.9	16.4
2007	25519	17213	315	8306	12.3	8.3	4.0	12.4

Աղյուսակ 1.5 (շարունակություն)

Table 1.5(continued)

Տարի <i>Year</i>	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով <i>Infant mortality rate, per 1000 live births</i>
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելված	ծնելիության	մահացության	բնական հավելվածի	
	Total, people				Rate, per 1000 population, ‰			
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

Գյուղական բնակչություն
Rural Population

1950	26249	6479	1479	19770	34.1	8.4	25.7	56.2
1960	42509	6591	2359	35918	46.6	7.2	39.4	55.7
1970	23980	5445	603	18535	23.7	5.4	18.3	25.1
1980	26327	6609	721	19718	25.1	6.3	18.8	27.5
1981	27648	6268	667	21380	26.3	6.0	20.3	24.5
1982	28421	6469	666	21952	26.8	6.1	20.7	23.7
1983	29689	6868	747	22821	27.8	6.4	21.4	25.5
1984	30696	7229	723	23467	28.6	6.7	21.9	23.9
1985	31028	7506	826	23522	28.8	7.0	21.8	26.7
1986	31068	7474	834	23594	28.7	6.9	21.8	26.9
1987	30781	7302	727	23479	28.2	6.7	21.5	23.5
1988	27068	8826	612	18242	24.7	8.1	16.6	22.2
1989	27379	7135	587	20244	25.3	6.6	18.7	21.4
1990	29738	7292	522	22446	27.0	6.7	20.3	18.0
1991	29386	7648	492	21738	26.3	6.9	19.4	16.7
1992	26609	8393	478	18216	23.8	7.5	16.3	17.4
1993	23725	8945	393	14780	21.7	8.2	13.5	15.9
1994	21185	7927	304	13258	19.5	7.3	12.2	13.9
1995	19829	8079	257	11750	18.1	7.4	10.7	13.0
1996	18746	8455	214	10291	17.0	7.7	9.3	11.4
1997	17025	8202	191	8823	15.3	6.9	8.4	11.2
1998	14831	7736	152	7095	13.3	7.3	6.0	10.3
1999	14044	8253	199	5791	12.5	7.4	5.1	13.9
2000	12886	8343	183	4543	11.4	7.3	4.1	13.9
2001	11737	8349	164	3388	10.3	7.3	3.0	13.7
2002	11425	8817	150	2608	10.0	7.7	2.3	13.0
2003	13164	9144	111	4020	11.5	8.0	3.5	8.8
2004	13892	9148	119	4744	12.1	7.9	4.2	8.7
2005	13737	9251	109	4486	11.9	8.0	3.9	7.9
2006	13846	9513	134	4333	12.0	8.2	3.8	9.7
2007	14586	9617	118	4969	12.6	8.3	4.3	8.2

Աղյուսակ 1.6 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՀԱՐԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՍԱՐՁԵՐԻ
 Table 1.6 THE MAIN INDICATORS OF NATURAL MOVEMENT OF POPULATION BY RA MARZES

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելաձ	ծնելիության	մահացության	բնական հավելաձի	
Year	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

Հայաստանի Հանրապետություն				The Republic of Armenia				
1995	48960	24842	697	24118	15.0	7.6	7.4	14.2
1996	48134	24936	747	23198	14.8	7.7	7.1	15.5
1997	43929	23985	678	19944	13.5	7.4	6.1	15.4
1998	39366	23210	580	16156	12.2	7.2	5.0	14.7
1999	36502	24087	572	12415	11.3	7.5	3.8	15.4
2000	34276	24025	540	10251	10.6	7.5	3.1	15.6
2001	32065	24003	497	8062	10.0	7.5	2.5	15.4
2002	32229	25554	450	6675	10.1	8.0	2.1	14.0
2003	35793	26014	422	9779	11.2	8.1	3.1	12.0
2004	37520	25679	430	11841	11.7	8.0	3.7	11.6
2005	37499	26379	460	11120	11.7	8.2	3.5	12.3
2006	37639	27202	523	10437	11.7	8.5	3.2	13.9
2007	40105	26830	433	13275	12.4	8.3	4.1	10.9
ք.Երևան				Yerevan city				
1995	13616	8847	207	4769	12.3	8.0	4.3	15.2
1996	13404	8464	255	4940	12.1	7.6	4.5	20.0
1997	12877	8555	231	4322	11.6	7.7	3.9	17.9
1998	11610	8341	205	3269	10.5	7.5	3.0	17.7
1999	10959	8426	168	2533	9.9	7.6	2.3	15.3
2000	10446	8452	169	1994	9.5	7.6	1.9	16.1
2001	10318	8457	145	1861	9.3	7.7	1.6	14.0
2002	10459	8873	156	1586	9.5	8.1	1.4	15.0
2003	11243	9012	154	2231	10.2	8.2	2.0	13.7
2004	11972	8894	162	3078	10.9	8.1	2.8	13.6
2005	12281	9110	177	3171	11.1	8.2	2.9	14.5
2006	12405	9235	130	3170	11.2	8.3	2.9	10.5
2007	13423	8800	91	4623	12.1	7.9	4.2	6.9
ՀՀ Արագածոտնի մարզ				RA Aragatsotn Marz				
1995	2485	1071	50	1414	17.9	7.7	10.2	20.1
1996	2575	965	33	1610	18.6	7.0	11.6	12.8
1997	2241	961	34	1280	16.1	6.9	9.2	15.2
1998	2130	949	25	1181	15.4	6.9	8.5	11.7
1999	1877	969	30	908	13.6	7.0	6.6	16.0
2000	1711	1001	28	710	12.4	7.3	5.1	16.1
2001	1497	959	14	538	10.8	6.9	3.9	9.3
2002	1532	1057	13	475	11.1	7.7	3.4	8.5
2003	1676	1119	12	557	12.1	8.1	4.0	7.3
2004	1755	1128	11	627	12.6	8.1	4.5	6.3
2005	1765	1103	10	662	12.7	7.9	4.8	5.7
2006	1797	1167	23	630	12.8	8.3	4.5	12.8
2007	1867	1199	15	668	13.3	8.5	4.8	8.1

Աղյուսակ 1.6 (շարունակություն)

Table 1.6 (continued)

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելված	ծնելիության	մահացության	բնական հավելվածի	
Year	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

ՀՀ Արարատի մարզ

RA Ararat Marz

1995	4146	1764	50	2382	15.4	6.6	8.8	12.1
1996	4211	1905	61	2306	15.7	7.1	8.6	14.5
1997	3613	1753	56	1860	13.4	6.5	6.9	15.5
1998	3292	1731	44	1561	12.2	6.4	5.8	13.4
1999	3038	1730	36	1308	11.3	6.4	4.9	11.8
2000	2856	1767	43	1089	10.5	6.5	4.0	14.8
2001	2626	1806	50	820	9.6	6.6	3.0	19.0
2002	2720	1953	25	767	10.0	7.2	2.8	9.3
2003	3017	2019	17	998	11.1	7.4	3.7	5.9
2004	3231	1981	23	1250	11.8	7.2	4.6	7.2
2005	3197	2042	24	1155	11.7	7.5	4.2	7.5
2006	3222	2030	36	1192	11.7	7.4	4.3	11.2
2007	3524	2131	32	1393	12.8	7.7	5.1	9.1

ՀՀ Արմավիրի մարզ

RA Armavir Marz

1995	4613	1843	52	2770	16.8	6.7	10.1	11.3
1996	4644	1824	57	2820	16.9	6.6	10.3	12.3
1997	4097	1742	55	2355	14.8	6.3	8.5	13.4
1998	3481	1679	42	1802	12.6	6.1	6.5	12.1
1999	3375	1825	57	1550	12.2	6.6	5.6	16.9
2000	3053	1834	36	1219	11.0	6.6	4.4	11.5
2001	2794	1826	36	968	10.1	6.6	3.5	12.6
2002	2765	1947	40	818	10.0	7.0	3.0	14.5
2003	3010	2090	26	920	10.9	7.6	3.3	8.7
2004	3387	1991	31	1396	12.2	7.2	5.0	9.4
2005	3385	2050	31	1335	12.2	7.4	4.8	9.2
2006	3356	2161	48	1195	12.0	7.7	4.3	14.3
2007	3566	2118	39	1448	12.7	7.5	5.2	11.1

ՀՀ Գեղարքունիքի մարզ

RA Gegharkunik Marz

1995	4499	1719	72	2780	18.7	7.1	11.6	16.0
1996	4518	1836	71	2682	18.9	7.7	11.2	15.7
1997	3960	1640	58	2320	16.6	6.9	9.7	14.6
1998	3395	1505	52	1890	14.2	6.3	7.9	15.4
1999	2959	1624	49	1335	12.4	6.8	5.6	16.5
2000	2756	1625	46	1131	11.5	6.8	4.7	16.3
2001	2488	1568	45	920	10.5	6.6	3.9	17.8
2002	2500	1786	39	714	10.5	7.5	3.0	15.6
2003	2906	1797	36	1109	12.2	7.5	4.7	12.8
2004	3091	1694	20	1397	12.9	7.1	5.8	6.6
2005	3164	1827	38	1337	13.2	7.6	5.6	12.1
2006	3029	1889	52	1140	12.7	7.9	4.8	17.1
2007	3143	1791	31	1352	13.1	7.5	5.6	10.0

Աղյուսակ 1.6 (շարունակություն)

Table 1.6 (continued)

Տարի			Ընդամենը, մարդ		Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելած	ծնելիության	մահացության	բնական հավելածի	
Year	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

ՀՀ Լոռու մարզ

RA Lori Marz

1995	4655	2669	50	1986	15.4	8.8	6.6	10.7
1996	4569	2679	65	1890	15.1	8.8	6.3	14.2
1997	4062	2583	57	1479	13.5	8.6	4.9	14.0
1998	3804	2525	54	1279	12.9	8.6	4.3	14.2
1999	3625	2444	56	1181	12.3	8.3	4.0	15.4
2000	3382	2646	60	736	11.7	9.2	2.5	17.6
2001	3076	2543	45	533	10.7	8.9	1.8	14.4
2002	3021	2656	49	365	10.6	9.3	1.3	16.2
2003	3471	2697	54	774	12.2	9.5	2.7	15.9
2004	3341	2645	50	696	11.8	9.3	2.5	14.8
2005	3237	2688	49	549	11.4	9.5	1.9	15.0
2006	3177	2802	54	375	11.2	9.9	1.3	16.9
2007	3200	2892	51	308	11.3	10.2	1.1	15.9

ՀՀ Կոտայքի մարզ

RA Kotayk Marz

1995	4260	1739	63	2521	15.1	6.2	8.9	14.8
1996	4100	1717	48	2383	14.5	6.1	8.4	11.7
1997	3659	1705	47	1954	12.9	6.0	6.9	12.8
1998	3145	1608	51	1537	11.2	5.7	5.5	16.2
1999	3158	1778	42	1380	11.3	6.4	4.9	13.3
2000	2971	1737	54	1234	10.8	6.3	4.5	17.8
2001	2763	1678	43	1085	10.1	6.2	3.9	15.3
2002	2736	1840	34	896	10.0	6.7	3.3	12.4
2003	3139	1959	32	1180	11.5	7.2	4.3	10.4
2004	3347	1911	31	1436	12.2	7.0	5.2	9.4
2005	3318	2004	27	1314	12.1	7.3	4.8	8.1
2006	3433	2076	47	1357	12.4	7.5	4.9	13.8
2007	3778	2197	51	1581	13.6	7.9	5.7	13.7

ՀՀ Շիրակի մարզ

RA Shirak Marz

1995	4980	2369	78	2611	17.3	8.2	9.1	15.7
1996	4657	2548	78	2109	16.3	8.9	7.4	16.7
1997	4456	2363	71	2093	15.6	8.3	7.3	15.9
1998	3874	2220	54	1654	13.6	7.8	5.8	13.9
1999	3278	2403	53	875	11.6	8.5	3.1	16.2
2000	3040	2297	48	743	10.7	8.1	2.6	15.6
2001	2830	2393	64	437	10.0	8.5	1.5	22.3
2002	2807	2563	49	244	9.9	9.0	0.9	17.4
2003	3230	2401	46	829	11.4	8.5	2.9	14.6
2004	3387	2513	51	874	12.0	8.9	3.1	15.2
2005	3317	2522	58	795	11.8	9.0	2.8	17.4
2006	3339	2615	74	724	11.9	9.3	2.6	22.2
2007	3498	2638	75	860	12.4	9.4	3.0	21.6

Աղյուսակ 1.6 (շարունակություն)

Table 1.6 (continued)

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով
	ծնվածներ	մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական հավելած	ծնելիության	մահացության	բնական հավելածի	
Year	Total, people				Rate, per 1000 population, ‰			Infant mortality rate, per 1000 live births
	Births	Deaths	of which infants under 1 year	Natural increase	Birth rate	Death rate	Natural increase rate	

ՀՀ Սյունիքի մարզ

RA Syunik Marz

1995	2238	1130	32	1108	14.9	7.5	7.4	14.3
1996	2287	1242	24	1045	15.2	8.3	6.9	10.5
1997	2005	1124	20	881	13.3	7.5	5.8	10.0
1998	1930	1098	17	832	12.8	7.3	5.5	9.8
1999	1855	1266	30	589	12.2	8.3	3.9	16.2
2000	1745	1085	20	660	11.4	7.1	4.3	11.3
2001	1535	1150	22	385	10.1	7.5	2.6	14.0
2002	1568	1163	18	405	10.3	7.6	2.7	11.6
2003	1765	1176	13	589	11.5	7.7	3.8	7.5
2004	1664	1220	25	444	10.9	8.0	2.9	14.8
2005	1609	1266	18	343	10.5	8.3	2.2	11.2
2006	1643	1361	24	282	10.7	8.9	1.8	14.7
2007	1749	1242	25	507	11.4	8.1	3.3	14.4

ՀՀ Վայոց Ձորի մարզ

RA Vayots Dzor Marz

1995	1085	437	11	648	17.9	7.2	10.7	10.1
1996	953	435	10	518	15.9	7.3	8.6	10.5
1997	906	416	12	490	15.3	7.0	8.3	13.2
1998	743	381	7	362	12.6	6.5	6.1	9.4
1999	686	415	15	271	11.8	7.1	4.7	21.9
2000	703	433	17	270	12.3	7.6	4.7	24.2
2001	664	414	8	250	11.8	7.3	4.5	12.1
2002	603	441	3	162	10.8	7.9	2.9	4.8
2003	676	439	8	237	12.1	7.9	4.2	12.4
2004	662	430	7	232	11.9	7.7	4.2	10.6
2005	664	493	9	171	11.9	8.8	3.1	13.6
2006	628	500	9	128	11.3	9.0	2.3	14.2
2007	687	468	3	219	12.3	8.4	3.9	4.4

ՀՀ Տավուշի մարզ

RA Tavush Marz

1995	2383	1254	32	1129	17.2	9.1	8.1	13.4
1996	2216	1321	45	895	16.2	9.7	6.5	20.3
1997	2053	1143	37	910	15.1	8.4	6.7	18.0
1998	1962	1173	29	789	14.5	8.7	5.8	14.8
1999	1692	1207	36	485	12.6	9.0	3.6	21.3
2000	1613	1148	19	465	12.0	8.5	3.5	11.8
2001	1474	1209	25	265	11.0	9.0	2.0	16.8
2002	1518	1275	24	243	11.3	9.5	1.8	16.0
2003	1660	1305	24	355	12.4	9.7	2.7	15.0
2004	1683	1272	19	411	12.5	9.4	3.1	11.3
2005	1562	1274	19	288	11.6	9.5	2.1	11.9
2006	1610	1366	26	244	12.0	10.2	1.8	16.2
2007	1670	1354	20	316	12.4	10.1	2.3	12.0